ԽՈՒՄԲ 10

51 հարց

DT կարգեր · տեսական հարցաշար

1. **Գլխի վնասվածքի դեպքում տուժածին օգնություն ցուցաբերելիս պետք է**

1. Պառկեցնել նրան՝ ոտքերը բարձրացնելով:
2. **Պառկեցնել նրան՝ գլուխն ու իրանը բարձրացնելով, ապահովել կիսապառկած դիրք:**
3. Պառկեցնել նրան հորիզոնական դիրքով:

Պատ.՝ 2

---

2. **Ավտովթարի ժամանակ հետեւյալ տուժածներից որի՞ն օգնություն կցուցաբերեք առաջին հերթին:**

1. Վախեցած հղի կնոջը
2. Քերծվածքներով երեխային
3. Բազկի կոտրվածքով տղամարդուն
4. **Անգիտակից տղամարդուն**

Պատ.՝ 4

---

3. **Քթից արյունահոսության դեպքում տուժածին օգնություն ցուցաբերելիս պետք է**

1. Տուժածի գլուխը հետ տանել:
2. **Տուժածի գլուխը կախ գցել եւ սեղմել քթի վերին հատվածը:**
3. Տուժածի քթի մեջ բամբակի տամպոն դնել:
4. Թողնել, որ արյունահոսի եւ ինքնուրույն դադարի:

Պատ.՝ 2

---

4. **Մեքենան վարելու ընթացքում վարորդը հանկարծակի սկսում է գանգատվել կրծքավանդակի ճնշող ուժեղ ցավերից եւ շնչառության դժվարացումից: Ի՞նչ է պետք անել:**

1. Առաջարկել նրան գնալ մոտակա հիվանդանոց
2. Տալ մի բաժակ ջուր, 2 հաբ վալերիանա
3. **Անմիջապես կանգնեցնել մեքենան եւ միացնել վթարային ազդանշանը**
4. Խորհուրդ տալ նրան մի փոքր քայլել ու մաքուր օդ շնչել

Պատ.՝ 3

---

5. **Ի՞նչ օգնություն է պետք ցուցաբերել տուժածին ցնցումային նոպայի դեպքում:**

1. Բռնել տուժածին՝ փորձելով զսպել ցնցումները
2. Փորձել բացել բերանը, բռնել լեզուն եւ որեւէ առարկա դնել ատամների միջեւ
3. Փորձել բացել շնչուղիները՝ տուժածի գլուխը ետ տանելով
4. **Ձեռք չտալ, թողնել, որ ցնցումներն ավարտվեն**

Պատ.՝ 4

---

6. **Ի՞նչ պետք է անել այրվածքի դեպքում օգնություն ցուցաբերելիս:**

1. Թողնել այրվածքը բաց
2. Բացել հեղուկով լցված բշտերը, ապա ամուր վիրակապել
3. Ձեթ քսել այրվածքի վրա
4. **Սառեցնել այրվածքը ջրով, ապա ծածկել ստերիլ վիրակապական նյութերով կամ մաքուր գործվածքներով**

Պատ.՝ 4

---

7. **Վթարի հետեւանքով հետիոտն ընկել է եւ վնասել ձեռքը: Նախաբազկի վրա կա մեծ վերք (մոտ 5 սմ երկարությամբ), որից միալար մուգ գույնի արյուն է հոսում: Ի՞նչ է պետք անել արյունահոսությունը դադարեցնելու նպատակով:**

1. Լվանալ վերքը ջրով
2. **Բարձրացնել տուժածի ձեռքը եւ տեղադրել ճնշող վիրակապ**
3. Վերքին յոդի սպիրտային լուծույթ քսել

Պատ.՝ 2

---

8. **Վերջույթների փափուկ հյուսվածքների փակ վնասվածքների դեպքում առաջին ժամերին օգնություն ցուցաբերելիս պետք է**

1. Վնասվածքին տաքացնող թրջոց դնել:
2. **Վնասված մասի վրա սառը թրջոց դնել եւ բարձրացնել:**
3. Վնասված մասի վրա սառը թրջոց դնել եւ պահել սրտի մակարդակից ցածր:
4. Վնասվածքին սպիրտային թրջոց դնել:

Պատ.՝ 2

---

9. **Վարորդը կքանստած երկար ժամանակ փոխում էր ավտոմեքենայի անիվը: Կտրուկ վեր կենալով՝ նա բռնում է գլուխը եւ, հանկարծ կորցնելով գիտակցությունը, ընկնում: Ի՞նչ է պետք անել:**

1. Փորձել նստեցնել նրան
2. **Բարձրացնել նրա ոտքերը**
3. Երեսին սառը ջուր լցնել
4. Ապտակել երեսին

Պատ.՝ 2

---

10. **Ի՞նչ է պետք անել, եթե հնարավոր չէ ապահովել դեպքի վայրի անվտանգությունը:**

1. Բոլորին օգնություն ցուցաբերել, բայց զգույշ լինել
2. Օգնություն ցուցաբերել այն տուժածին, որն ավելի մոտ է գտնվում ձեզ
3. **Չմոտենալ, անմիջապես ահազանգել եւ չթողնել կողմնակի մարդկանց մոտենալ դեպքի վայր**
4. Չմոտենալ, խնդրել մեկ ուրիշին օգնություն ցույց տալ

Պատ.՝ 3

---

11. **Դուք տեսնում եք ընկած մարդու եւ նկատում նրա սրունքից դուրս ցցված ոսկորը եւ արյուն: Եթե դեպքի վայրն անվտանգ է, ի՞նչ պետք է անել առաջին հերթին:**

1. Ահազանգել շտապ օգնություն
2. **Ստուգել գիտակցությունը եւ շնչառությունը**
3. Անշարժացնել ոտքը

Պատ.՝ 2

---

12. Երբ տուժածն ունի վերջույթի բաց կոտրվածք, ապա օգնություն ցուցաբերելիս անհրաժեշտ է

1. Անմիջապես բարձրացնել տուժածի վերջույթը:
2. **Ստերիլ անձեռոցիկով ծածկել վերքը եւ անշարժացնել վնասված վերջույթը:**
3. Ուղղակի ճնշմամբ դադարեցնել արյունահոսությունը:
4. Տեղադրել սառը թրջոցներ վերքին:

Պատ.՝ 2

---

13. Կրծքավանդակի վնասվածքի դեպքում պետք է

1. Պառկեցնել տուժածին հորիզոնական դիրքով:
2. **Նստեցնել՝ հենելով վնասված կողմի վրա:**
3. Նստեցնել՝ հենելով առողջ կողմի վրա:

Պատ.՝ 2

---

14. Տուժածի որովայնի վրա բաց վնասվածքից օրգանների արտընկման դեպքում պետք է

1. Լվանալ եւ զգուշորեն փորձել տեղը մտցնել արտընկած օրգանները:
2. **Արտընկած օրգանները ծածկել մաքուր խոնավ գործվածքով եւ պոլիէթիլենային թաղանթով:**
3. Կտրել արտընկած օրգանները եւ վերքը վիրակապել:
4. Ձեռք չտալ, այդ վիճակում տեղափոխել հիվանդանոց:

Պատ.՝ 2

---

15. Անգիտակից վիճակում գտնվող եւ շնչառություն ունեցող տուժածին պետք է

1. Պառկեցնել մեջքի վրա:
2. Բացել բերանը եւ դուրս քաշել լեզուն:
3. **Շրջել կողքի եւ գլուխը հետ տանել:**

Պատ.՝ 3

---

16. Ուժեղ արյունահոսության դեպքում պետք է

1. Միայն վիրակապով ծածկել վերքը:
2. **Ճնշումով վիրակապել վնասված մասը եւ ճնշում գործադրել զարկերակի սեղման կետի վրա:**
3. Մոխիր լցնել վերքի մեջ:

Պատ.՝ 2

---

17. Ավտովթարի դեպքում առաջին հերթին պետք է

1. Տուժածին բերել հարմար դիրքի:
2. **Ձնել դեպքի վայրը եւ ապահովել անվտանգությունը:**
3. Ստուգել տուժածի մոտ ուժեղ արյունահոսությունների առկայությունը:
4. Տեղափոխել տուժածին մեքենայից:

Պատ.՝ 2

---

18. Եթե տուժածի վերքի մեջ օտար մարմին կա, ապա օգնություն ցուցաբերելիս պետք է

1. Հեռացնել օտար մարմինը վերքից:
2. Թողնել վնասված մասն արյունահոսի:
3. **Ապահովել օտար մարմնի անշարժ վիճակը:**
4. Սպիրտով մշակել վերքի տարածքը:

Պատ.՝ 3

---

19. Հանգիստ վիճակում չափահաս մարդու անոթազարկը կազմում է

1. 40-60 զարկ մեկ րոպեում:
2. **60-80 զարկ մեկ րոպեում:**
3. 80-100 զարկ մեկ րոպեում:

Պատ.՝ 2

20. Հանգիստ վիճակում չափահաս մարդու շնչառությունը կազմում է

1. **12-18 շնչառական շարժում մեկ րոպեում:**
2. 20-30 շնչառական շարժում մեկ րոպեում:
3. 40-60 շնչառական շարժում մեկ րոպեում:

Պատ.՝ 1

21. Վթարի դեպքում ավտոմեքենայից տուժածին պետք է տեղափոխել, եթե

1. Տուժածն ունի լուրջ վնասվածքներ:
2. **Դեպքի վայրը վտանգավոր է, օրինակ՝ պայթյունի վտանգ կա:**
3. Մեքենայի վրա ընկած է հոսանքի հաղորդալար:

Պատ.՝ 2

22. Որովայնային ներքին արյունահոսության կասկածի դեպքում օգնություն ցուցաբերելիս պետք է

1. **Պառկեցնել տուժածին եւ վնասվածքին սառը թրջոց տեղադրել:**
2. Որովայնին տաք ջեռակ տեղադրել:
3. Որովայնին ճնշող վիրակապ տեղադրել:
4. Տուժածին մեծ քանակով հեղուկ տալ:

Պատ.՝ 1

23. Դուք հարեւանի ավտոտնակից լսում եք մեքենայի շարժիչի ձայնը եւ, բացելով դուռը, տեսնում եք գետին ընկած հարեւանին: Ի՞նչ է պետք անել առաջին հերթին:

1. **Լայն բացել դռները եւ անջատել շարժիչը, հնարավորության դեպքում տեղափոխել տուժածին դեպքի վայրից**
2. Մանրակրկիտ զննել տուժածի մարմինը՝ վնասվածքներ հայտնաբերելու համար
3. Բերել տուժածին կողքի ապահովության դիրքի
4. Օգնել տուժածին ընդունել կիսանստած դիրք

Պատ.՝ 1

24. Անգիտակից վիճակում գտնվող տուժածին հայտնաբերելուց հետո առաջին հերթին պետք է

1. Նրան տալ սառը ջուր:
2. Շրջել կողքի՝ բերելով ապահով դիրքի:
3. Պահպանել մարմնի նորմալ ջերմաստիճանը:
4. **Բացել շնչուղիները եւ ստուգել շնչառությունը:**

Պատ.՝ 4

25. **Վերջույթներում արյան շրջանառությունը ստուգելու համար վիրակապից ներքեւ սեղմում եւ բաց եք թողնում տուժածի վնասված վերջույթի եղունգը: Արյան շրջանառությունը վերջույթում խանգարված է, եթե**

1. Տուժածը ցավ է զգում:
2. Տուժածն անհանգստություն է զգում:
3. Սեղմելիս եղունգը դժվարությամբ է սպիտակում:
4. **Եղունգը դժվարությամբ է կրկին վարդագույն դառնում:**

Պատ.՝ 4

---

26. **Շաքարախտով հիվանդ ձեր ընկերն իրեն վատառողջ է զգում եւ չի հիշում, թե վերջին անգամ երբ է ինսուլին ընդունել: Ի՞նչ է պետք անել այդ դեպքում առաջին հերթին:**

1. **Տալ նրան շաքար կամ քաղցր հեղուկ**
2. Առաջարկել նրան մի քանի ժամ հանգստանալ
3. Խորհուրդ տալ ներարկել ինսուլին

Պատ.՝ 1

---

27. **Արյունահոսությունն առավել վտանգավոր է, եթե**

1. Արյունը 10 րոպեի ընթացքում մակարդվում է:
2. **Արյունը շիթով բխում է վերքից:**
3. Արյունը մուգ կարմիր է:
4. Արյունը միալար հոսում է վերքից:

Պատ.՝ 2

---

28. **Մեքենան բախվել է սյանը եւ էլեկտրական հաղորդալարն ընկած է մեքենայի կողքն անգիտակից վիճակում պառկած տուժածի վրա: Օգնություն ցուցաբերելիս առաջին հերթին պետք է**

1. Հեռացնել տուժածին հոսանքի աղբյուրից:
2. Կատարել առաջնային զննում:
3. **Հեռացնել հաղորդալարը տուժածի վրայից որեւէ մեկուսիչ առարկայով:**
4. Փնտրել մարմնի վրա հոսանքի մուտքի եւ ելքի տեղերը (այրվածքները):

Պատ.՝ 3

---

29. **Առաջին օգնություն ցուցաբերելիս վարակումից պաշտպանվելու համար պետք է**

1. **Խուսափել վերքին անմիջապես դիպչելուց եւ օգնություն ցուցաբերել միայն ստերիլ ձեռնոցներով:**
2. Չօգնել այն տուժածներին, որոնք ունեն արյունահոսություն:

Պատ.՝ 1

---

30. **Բրոնխիալ ասթմայով տուժածին նոպայի դեպքում պետք է**

1. **Օգնել ընդունել կիսանստած դիրք:**
2. Պառկեցնել եւ բարձրացնել ոտքերը:
3. Պառկեցնել՝ ծնկները ծալած:
4. Պառկեցնել գլուխը բարձր դիրքով:

Պատ.՝ 1

---

31. Որովայնի վնասվածքով տուժածին պետք է

1. Պառկեցնել գլուխը բարձր դիրքով:
2. Պառկեցնել եւ բարձրացնել ոտքերը:
3. **Պառկեցնել՝ ծնկները ծալած:**

Պատ.՝ 3

32. Ուշագնացության դեպքում տուժածին պետք է

1. Օգնել ընդունել կիսանստած դիրք:
2. **Պառկեցնել եւ բարձրացնել ոտքերը:**
3. Պառկեցնել՝ ծնկները ծալած:
4. Պառկեցնել գլուխը բարձր դիրքով:

Պատ.՝ 2

33. Ցածր թափքով մեքենայի և 1մ 55սմ ու ավելի հասակ ունեցող չափահաս հետիոտնի բախման դեպքում առավել հավանական է, որ վերջինիս մոտ վնասվածքներ կառաջանան

1. **Ստորին վերջույթի եւ գլխի հատվածներում:**
2. Կոնքի եւ կրծքավանդակի հատվածներում:

Պատ.՝ 1

34. Ցածր թափքով մեքենայի և 3-5 տարեկան երեխայի բախման դեպքում առավել հավանական է, որ վերջինիս մոտ վնասվածքներ կառաջանան

1. Ստորին վերջույթի եւ գլխի հատվածներում:
2. **Կոնքի եւ կրծքավանդակի հատվածներում:**

Պատ.՝ 2

35. Եթե հաղորդալարն ընկած է մեքենայի վրա, ապա պետք է

1. Օգնել մեքենայում գտնվող անձանց շտապ դուրս գալ մեքենայից:
2. **Մեքենայում գտնվող անձանց խնդրել մնալ մեքենայի մեջ մինչեւ էլեկտրական հոսանքը չանջատեն:**

Պատ.՝ 2

36. Քիչ վտանգավոր վերքերի մշակման ժամանակ պետք է

1. **Լվանալ վերքը օճառով եւ մաքուր ջրով, այնուհետեւ վիրակապել:**
2. Մշակել վերքը սպիրտ պարունակող նյութերով (յոդ, օղի, օծանելիք եւ այլն):

Պատ.՝ 1

37. Վտանգավոր վերքերի մշակման ժամանակ պետք է

1. Լվանալ վերքը օճառով եւ մաքուր ջրով:
2. Մշակել վերքը սպիրտ պարունակող նյութերով (յոդ, օղի, օծանելիք եւ այլն):
3. **Դադարեցնել արյունահոսությունը եւ վիրակապել վերքը:**

Պատ.՝ 3

38. **Վթարի դեպքում շտապօգնության կանչի համար ի՞նչ տեղեկատվություն պետք է տրամադրվի օպերատորին:**

1. Նշել վթարի վայրին ամենամոտ գտնվող կողմնորոշիչը: Հաղորդել տուժածների թիվը, նշել նրանց սեռը և տարիքը:
2. Նշել վթարի վայրին ամենամոտ գտնվող փողոցը և տան համարը: Տեղեկացնել, թե ով է տուժել վթարի հետևանքով (հետիոտն, մեքենայի վարորդ կամ ուղևոր) և նկարագրել ստացված վնասվածքները:
3. **Նշել վթարի վայրը (փողոցը, տան համարը և դեպքի վայրին ամենամոտ կողմնորոշիչները): Տեղեկացնել տուժածների թիվը, նրանց սեռը, մոտավոր տարիքը, գիտակցության, շնչառության, արյան շրջանառության, ինչպես նաև ուժեղ արյունահոսության, կոտրվածքների և այլ վնասվածքների առկայության մասին: Սպասել մինչև օպերատորը նշի, որ կանչն ընդունված է:**

Պատ.՝ 3

---

39. **Ի՞նչ օպտիմալ դիրք պետք է ապահովել գիտակցությունը չկորցրած տուժածին ողնաշարի վնասվածքի կասկածի դեպքում:**

1. Տուժածին պառկեցնել կողքի
2. **Տուժածին պառկեցնել մեջքի վրա՝ կոշտ, հարթ մակերեսի վրա, առանց անհրաժեշտության չտեղաշարժել, դիրքը չփոխել**
3. Տուժածին պառկեցնել մեջքի վրա, պարանոցի տակ տեղադրել շորերից պատրաստված գլանակ և բարձրացնել ոտքերը

Պատ.՝ 2

---

40. **Ինչպե՞ս իրականացնել առաջին օգնությունը ցրտահարության և գերսառեցման դեպքում:**

1. Մարմնի ախտահարված հատվածները շփել ձյունով կամ բրդյա կտորով, ապա տաքացնել, տալ ալկոհոլային խմիչք, տեղափոխել տաք տարածք
2. **Տաքացնել մարմնի ախտահարված հատվածները և անշարժացնել դրանք, տուժածին ծածկել տաք շորերով կամ ծածկոցով, տալ տաք ըմպելիք, տեղափոխել տաք տարածք**
3. Մարմնի ախտահարված հատվածները քսուքով պատել, տաքացնող կոմպրես և ջեռակ դնել, տեղափոխել տաք տարածք, տալ տաք ըմպելիք

Պատ.՝ 2

---

41. **Ինչպիսի՞ առաջին օգնություն պետք է ցուցաբերել գլխի մազածածկ մասի վերքի առկայությամբ գանգուղեղային վնասվածքի դեպքում:**

1. **Դադարեցնել արյունահոսությունը վերքի վրա ուղղակի ճնշման միջոցով, վերքի վրա դնել սեղմող վիրակապ: Գիտակցության կորստի դեպքում տուժածին տալ կայուն կողքի շրջված դիրք: Հնարավորության դեպքում գլխի վնասվածքի շրջանում սառը դնել:**
2. Անշարժացնել ողնաշարի պարանոցային հատվածը ՝ օգտագործելով ինքնաշեն շինա (օձիք): Վերքի վրա դնել ստերիլ բամբակե խծուծ, տուժածին պառկեցնել մեջքի վրա՝ ոտքերը բարձրացրած դիրքում: Հնարավորության դեպքում գլխին սառը դնել:
3. Արգելվում է պարանոցային շինա դնել: Անհրաժեշտ է վերքը ծածկել բժշկական կպչուն սպեղանիով, տուժածին պառկեցնել կողքի վրա:

Պատ.՝ 1

---

42. **Արյան շրջանառության և շնչառության առկայության դեպքում, առաջին օգնություն ցուցաբերելիս, ի՞նչ դիրքով է պետք պառկեցնել տուժածին, եթե նա կորցրել է գիտակցությունը:**

1. Մեջքի վրա՝ գլխի տակ դնելով գլանակ
2. Մեջքի վրա՝ ոտքերը տարածած վիճակում
3. **Տուժածին տալ կայուն կողքի շրջված դիրք այնպես, որ ծալված ծնկները հպվեն գետնին, իսկ վերևում գտնվող ձեռքը գտնվի այտի տակ**

Պատ.՝ 3

---

43. **Որքա՞ն ժամանակ կարող է կապված մնալ արյունահոսությունը դադարեցնող լարանը:**

1. Տաք եղանակին՝ ոչ ավելի, քան կես ժամ, իսկ ցուրտ եղանակին՝ ոչ ավելի, քան մեկ ժամ
2. **Տաք եղանակին՝ ոչ ավելի, քան 1 ժամ, իսկ ցուրտ եղանակին՝ ոչ ավելի, քան կես ժամ**
3. Լարանի կապված մնալու ժամանակը սահմանափակ չէ

Պատ.՝ 2

---

44. **Ինչպե՞ս որոշել գիտակցությունը կորցրած տուժածի մոտ շնչառության առկայությունը:**

1. Բռնել տուժածի կզակից, հետ թեքել գլուխը և հետևել կրծքավանդակի շարժմանը 10 վայրկյան տևողությամբ
2. **Մի ձեռքը դնել տուժածի ճակատին, մյուս ձեռքի երկու մատով կզակը բարձրացնելով և գլուխը հետ թեքելով անհրաժեշտ է 10 վայրկյան տևողությամբ հետևել շնչառությանը՝ փորձելով արտաշնչած օդը զգալ Ձեր այտին և հետևել կրծքավանդակի շարժմանը**
3. Առանց տուժածի գլուխը թեքելու, անհրաժեշտ է խոնարհվել նրա դեմքին և 10 վայրկյան տևողությամբ հետևել նրա շնչառությունը՝ փորձելով արտաշնչած օդը զգալ Ձեր այտին և հետևել կրծքավանդակի շարժմանը

Պատ.՝ 2

---

45. **Որո՞նք են խոշոր զարկերակային արյունահոսության հիմնական նշանները, և ո՞ր գործողությունից պետք է սկսել առաջին օգնության ցուցաբերումը նման իրավիճակում:**

1. Վերքից դանդաղորեն դուրս է հոսում մուգ գույնի արյուն:Վերքի վրա դրվում է սեղմող վիրակապ, որի վրա գրառում կա վերքի վրա պահելու ժամանակի վերաբերյալ
2. **Վերքից վառ կարմիր գույնի արյուն է հոսում՝ ուժեղ ցայտելով, ընդհատվող շիթով կամ շատրվանի նման: Վնասված զարկերակն անհրաժեշտ է սեղմել մատներով, այնուհետև վերքից վերև, որքան հնարավոր է վերքին մոտ դրվում է արյունահոսությունը կանգնեցնող լարան, որի վրա գրառում կա պահելու ժամանակի վերաբերյալ**
3. Արյունը դանդաղորեն դուրս է հոսում վերքից: Վնասվածքից ցած դրվում է արյունահոսությունը կանգնեցնող լարան, որի վրա գրառում կա պահելու ժամանակի վերաբերյալ

Պատ.՝ 2

---

46. **Արդյո՞ք թույլատրվում է դեղեր տալ տուժածին առաջին բուժօգնություն ցուցաբերելու ժամանակ:**

1. Թույլատրվում է
2. Թույլատրվում է ծայրահեղ անհրաժեշտության դեպքում
3. **Արգելվում է**

Պատ.՝ 3

---

47. **Ինչպե՞ս դադարեցնել արյունահոսությունը երակների և ոչ խոշոր զարկերակների վնասվածքի դեպքում:**

1. **Դնել ճնշող վիրակապ վնասվածքի տեղում**
2. Վերքից վերև գտնվող հատվածում ճնշող վիրակապ դնել
3. Վերքից ներքև գտնվող հատվածում ճնշող վիրակապ դնել

Պատ.՝ 1

---

48. **Վթարի հետևանքով առաջացած վնասվածքների դեպքում որո՞նք են առաջին բուժօգնության նախնական քայլերը:**

1. Վերքը լվանալ ջրով, վերքից հեռացնել օտար մարմինները, վերքի վրա դնել ստերիլ բամբակ՝ ամրացնելով բինտային վիրակապով
2. Հագնել բժշկական ձեռնոցներ, վերքը մաքրել յոդի ալկոհոլային լուծույթով, դեղաքսուք դնել և ծածկել կպչուն սպեղանիով
3. **Հագնել բժշկական ձեռնոցներ, վերքն առանց մաքրելու ծածկել ստերիլ թանզիֆե անձեռոցիկով՝ եզրերին ամրացնելով կպչուն սպեղանի կամ բինտով վիրակապել:**

Պատ.՝ 3

---

49. **Ինչպե՞ս է առաջին օգնություն իրականացվում վերջույթների կոտրվածքների դեպքում, եթե չկան շինաներ և այն պատրաստելու համար ձեռքի տակ եղած միջոցներ:**

1. Վերին վերջույթը իրանի երկայնքով տարածած կապվում է իրանին: Ստորին վերջույթները կապվում են միմյանց՝ փափուկ կտոր դնելով դրանց միջև
2. **Վերին վերջույթը արմնկային հոդում ծալված և գլխաշորի վրա հենած կապվում է իրանին: Ստորին վերջույթները կապվում են միմյանց՝ փափուկ կտոր դնելով դրանց միջև**
3. Վերին վերջույթը արմնկային հոդում ծալված և գլխաշորի վրա հենած կապվում է իրանին: Ստորին վերջույթները կապվում են միմյանց

Պատ.՝ 2

---

50. **Ո՞ր դեպքերում պետք է տուժածը դուրս հանվի ավտոմեքենայի խցիկից:**

1. Ավտոմեքենայի շրջվելու, բռնկվելու, պայթյունի մեծ հավանականության կամ տուժածի գիտակցության կորստի դեպքում
2. **Ավտոմեքենայի շրջվելու, բռնկվելու, պայթյունի մեծ հավանականության կամ տուժածի գերսառեցման, գիտակցության և շնչառության կորստի դեպքում, ինչպես նաև անմիջականորեն խցիկում առաջին օգնություն ցուցաբերելու անհնարինության դեպքում**
3. Ավտոմեքենայի շրջվելու, բռնկվելու, պայթյունի մեծ հավանականության դեպքում կամ տուժածի մոտ ծանր արյունահոսության, գանգուղեղային վնասվածքի առկայության դեպքում

Պատ.՝ 2

---

51. **Մակերեսային ջերմային այրվածքի (մաշկի կարմրություն, այտուցվածություն, այրվածքի տեղում թափանցիկ հեղուկով լցված բշտիկների առաջացում, ուժեղ ցավ) ժամանակ առաջին օգնություն ցուցաբերելիս՝ ի՞նչ է պետք անել:**

1. Այրված մակերեսի վրա սառը ջուր լցնել, ծածկել ստերիլ անձեռոցիկով և ամուր վիրակապել
2. Բացել բշտիկները, մաքրել այրվածքի մակերեսը հագուստի մնացորդներից, ծածկել ստերիլ անձեռոցիկով (չվիրակապել), հնարավորության դեպքում սառը դնել, և տուժածին ջուր խմեցնել
3. **20 րոպե տևողությամբ այրվածքի մակերեսը սառեցնել ջրով: Առանց բշտիկները բացելու և հագուստի մնացորդները հեռացնելու՝ այրվածքի մակերեսը ծածկել ստերիլ անձեռոցիկով (չվիրակապել), հնարավորության դեպքում սառը դնել և տուժածին ջուր խմեցնել:**

Պատ.՝ 3
